Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր №1

ք.Երևան «06» փետրվարի 2026 թ.

Պետական գույքի կառավարման կոմիտեն՝ (այսուհետ՝ Կոմիտե), (ՀՀ ք.Երևան, Տիգրան Մեծի 4) ի դեմս Կոմիտեի Գլխավոր քարտուղար Մարո Գեղամի Մարգարյանի, ով գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և քաղաքացի Սիլվա Պավելի Մադունցը (այսուհետ՝ փորձագետ), (ծնված 26.01.1960 թ., նույնականացման քարտ՝ 005638671, տրված 005-ի կողմից, 13.10.2017 թ., հանրային ծառայությունների համարանիշ՝ 7601600416, հաշվառման հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Շոպրոնի փողոց, 8 շենք, 3 բնակարան)՝ մյուս կողմից (երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին՝

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Կոմիտեն փորձագետին հանձնարարում է իրականացնել որոշակի աշխատանքներ, որոնց նկարագրությունը նշված է Պայմանագրի 1.3.-րդ կետում և պարտավորվում է վճարել նրա կատարած աշխատանքի համար, իսկ փորձագետը պարտավորվում է կատարել հանձնարարված աշխատանքները Պայմանագրով սահմանված պայմաններով:

1.2. Փորձագետն անմիջականորեն ենթարկվում է Կոմիտեի անձնակազմի կառավարման բաժնի (այսուհետ՝ Բաժին) պետին: Աշխատանքների կատարման վայրն է՝ Կոմիտեի գտնվելու վայրը (ք.Երևան, Տիգրան Մեծի 4):

1.3. Պայմանագրով փորձագետին առաջադրվող աշխատանքը ներառում է՝

1.3.1. Կոմիտեի նախագահի, գլխավոր քարտուղարի՝ անձնակազմի կառավարման գծով հրամանների նախագծերի նախապատրաստման, հրամաններ ստորագրվելուց հետո աշխատողներին տեղեկացման, համապատասխան պաշտոնի նշանակվող՝ Կոմիտեի ենթակայությանը հանձնված կազմակերպությունների ղեկավարների, ինչպես նաև քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց անձնական գործերի վարման (այդ թվում քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում), հաշվառման, հանձնման-ընդունման, պահպանման, աշխատողների աշխատանքային ստաժի հաշվարկման աշխատանքների իրականացում,

1.3.2. Կոմիտեի քաղաքացիական ծառայողների նկատմամբ անցկացվող ծառայողական քննություն վարողին (վարողներին) պահանջվող փաստաթղթերի տրամադրում,

1.3.3. Կոմիտեի աշխատողների աշխատանքային կարգապահության հսկողության իրականացում,

1.3.4. պատկան մարմինների կողմից նախկին և ներկայիս աշխատակիցների վերաբերյալ պահանջվող տեղեկատվության տրամադրում,

1.3.5. Կոմիտեի անձնակազմի կառավարման ոլորտին վերաբերող բողոքների, դիմումների, առաջարկությունների ուսումնասիրություն և դրանց վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,

1.3.6. Կոմիտեի աշխատողների աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերի վարման աշխատանքների իրականացում,

1.3.7. Կոմիտեի աշխատողների գործուղումների ձևակերպման աշխատանքների իրականացում և աշխատողներին գործուղման վկայականների տրամադրում,

1.3.8. Բաժնի գործառույթներին առնչվող իրավական ակտերում փոփոխություններ կատարելու մասին առաջարկների ներկայացում,

1.3.9. Բաժնի կանոնադրական խնդիրներից բխող այլ գործառույթների իրականացում:

1.4. Փորձագետի համար Պայմանագրով նախատեսված աշխատանքը համարվում է հիմնական:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Փորձագետը պարտավորվում է՝

2.1.1. Բարեխղճորեն կատարել Պայմանագրով ստանձնած աշխատանքները:

2.1.2. Պահպանել Կոմիտեում սահմանված ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը:

2.1.3. Պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման միջոցները:

2.1.4. Իրականացնել աշխատանքային օրենսդրությամբ, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով և Պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականությունները:

2.2. Փորձագետն իրավունք ունի՝

2.2.1. Պայմանագրի 4-րդ կետի համաձայն ստանալու վարձատրություն:

2.2.2. Պահանջելու Կոմիտեից ապահովել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իր հանգստի իրավունքը:

2.2.3. Իրականացնելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Պայմանագրով իրեն վերապահված այլ իրավունքներ:

2.3. Կոմիտեն պարտավորվում է՝

2.3.1. Պայմանագրի 4-րդ կետի համաձայն վճարել փորձագետի աշխատավարձը:

2.3.2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փորձագետին տրամադրել արձակուրդ:

2.3.3. Ապահովել անվտանգ և առողջության համար անվնաս աշխատանքային պայմաններ:

2.3.4. Փորձագետին ծանոթացնել Կոմիտեում գործող ներքին կարգապահական կանոններին, աշխատանքի պաշտպանության և հակահրդեհային անվտանգության ապահովման պահանջներին:

2.3.5. Ժամանակին ապահովել փորձագետին անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով:

2.3.6. Փորձագետի անձնական տվյալները մշակելիս պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պահանջները:

2.3.7. Իրականացնել աշխատանքային օրենսդրությամբ և Պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականություններ:

2.4. Կոմիտեն իրավունք ունի՝

2.4.1. Ցանկացած պահին ստուգելու փորձագետին հանձնարարված աշխատանքների կատարման ընթացքը:

2.4.2. Փորձագետին ներգրավելու արտաժամյա աշխատանքների, որի տևողությունն իրար հաջորդող երկու օրերի ընթացքում չի կարող անցնել 4 ժամը:

2.4.3. Իրականացնելու աշխատանքային օրենսդրությամբ և Պայմանագրով իրեն վերապահված այլ իրավունքներ:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՌԵԺԻՄԸ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ, ԱՐՁԱԿՈՒՐԴԸ

3.1. Փորձագետի համար սահմանվում է աշխատաժամանակի նորմալ տևողություն: Աշխատանքային օրվա սկիզբը սահմանվում է ժամը 09:00, ավարտը՝ ժամը 18:00:

3.2. Փորձագետին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրվում է ամենամյա նվազագույն արձակուրդ՝ 20 աշխատանքային օր տևողությամբ:

4. ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Պայմանագրով նախատեսված աշխատանքների իրականացման համար Կոմիտեն փորձագետին յուրաքանչյուր ամիս վճարում է հիմնական աշխատավարձ 221 312 (երկու հարյուր քսանմեկ հազար երեք հարյուր տասներկու) ՀՀ դրամ:

4.2. Փորձագետին արտաժամյա, գիշերային, հանգստյան և ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին աշխատանքների ներգրավելու դեպքում վարձատրությունը սահմանվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված նվազագույն չափերով:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ, ԼՐԱՑՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐՈՒՄԸ

5.1. Պայմանագիրը կարող է փոփոխվել և լրացվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ աշխատանքային օրենսգրքով նախատեսված դեպքերի: Պայմանագրի փոփոխությունները և լրացումները կատարվում են լրացուցիչ համաձայնագրերով, որոնք կհանդիսանան Պայմանագրի անբաժան մասը:

5.2. Պայմանագիրը լուծվում է աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված կարգով և դեպքերում, ինչպես նաև առանձին խնդիրների իրականացման համար պետական մարմինների կողմից փորձագետի ներգրավման կարգի խախտմամբ կնքված լինելու դեպքերում:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում 2026 թվականի փետրվարի 6-ից և գործում է մինչև 2027 թվականի փետրվարի 6-ը:

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Պայմանագրով չկարգավորված բոլոր հարցերը ենթակա են կարգավորման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.2. Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.3. Պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Կոմիտեի գլխավոր քարտուղար	Փորձագետ
Մարո Մարգարյան	Սիլվա Մադունց

X

ՄԱՐՈ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Signed by: MARGARYAN MARO 6702910622

Digitally signed by MADUNTS SILVA 7601600416
Date: 2026.02.06 12:24:04 AMT

_____ (ստորագրությունը)

_____ (ստորագրությունը)